

հոված է ներկայ Ռուսաստանին, որ եւրոպական շրջապատող շղթայի փոխարէն՝ ասիական նախիրին կ'ուղէ ասպաւինիւր:

Այդ դասաւորուած դիրքերու ներքին աստառը երբ քննենք, կը տեսնենք Ռուսաստանի հետամտած հաշիւը: Ա) եթէ բռնկուեցաւ համաշխարհային յեղափոխութիւնը Եւրոպայի եւ Մերձաւոր Արեւելքի մէջ, Թուրքիա, ինքնին գլխիկոր՝ այդ հոսանքին հետ պիտի երթայ եւ իյնայ ռուսական զերագանց ազդեցութեան տակ. իսկ Բ) եթէ ուշանայ համաշխարհային յեղափոխութիւնը (ինչ որ հիմա անվիճելի իւրողութիւն մըն է) բոլշևիկեան Ռուսաստանը կը սնուցանէ այն թաղուն մտածումը, որով ան կը ձգտի գտնէ Թուրքիան խորհրդային կարգերու վերածել, եւ այսպիսով, «բոլշևիկեան» Թուրքիոյ «ազատ» կամեցողութեամբ, Ռուսաստանի կարմիր աստղը հասցնել մինչեւ Պոլիս, Էնկիւրի, Կիլիկիա, Մարմարա եւ Միջերկրական ծովը:

Ռուսաստանն ու Թուրքիան իրարու ներհակ այս թաղուն ձգտումները դիտեն, բայց իւրաքանչիւրը՝ մղուած իր հրամայական շահերէն՝ կը մնան բարեկամ ու զաշնակից, ապահովելով կանխիկ շահեր, զգուշանալով հաւանական վնասներէ:

Այսպէս էր, որ Թուրքիան հասաւ մինչեւ Ախուրեան գետը եւ պահակներ կանգնեցուց Մարդարայի կամուրջին գլուխը:

Այս ներքին ձգտումն էր պատճառը, որ բոլշևիկները Էնկիւրի փաշան Կովկաս զրկեցին Թուրքիա մտնելու եւ զայն յեղաշրջելու համար:

Թուրք բոլշևիկ այն խմբակը, որ Տրապիզոնի ծովին մէջ խեղդամահ եղաւ քեմալական իշխանութեան կողմէ, բացայայտ ապացոյց մըն էր, որ բոլշևիկեան Ռուսաստանը լուրջ կազմակերպական միջոցներու դիմած էր ներսէն սլայթեցնելու Թուրքիան. բայց այդ ձեռնարկը ձախողեցաւ դաւադիր փաշայութեան դասական երկրի մէջ:

Թուրքիա հրաժարա՞ծ է իր զաղտնի ծըրադիրներէն: Երբեք: Ազգային պետութիւն մը կազմակերպելով, քեմալական Թուրքիա կը զօրանայ Էնկիւրիի, Պրուսայի, Գոնիայի եւ Քասսէմոնիի նահանգներու մէջ: Այս կեղբո-

նական նահանգներէն դուրս, անիկա կ'աշխատի իր ուժին ու հմայքին ենթարկել Պոլիսը, Իզմիրը եւ Կիլիկիան: Իսկ միւս կողմէ, կ'ուղէ տարածուիլ Արեւելեան Նահանգները, ուժով նալ Կարսի եւ Սուրմալուի մէջ, աջակից առնել իրեն նախիջեանը եւ մօտենալ Թրքական օձախներու, որոնք պատրաստի բոյներ են դըլխաւորաբար Ազրբէջանի եւ մասամբ մըն ալ պարսկական Ատրպատականի մէջ:

Բոլշևիկեան Ռուսաստանը հրաժարա՞ծ է Թուրքիան խորհրդայնացնելու մտքէն: Երբեք: Սակայն, հիմա Ռուսաստանը ի վիճակի է գործնական քայլեր ընելու այդ ուղղութեամբ: Ան կը բաւականանայ նախապատրաստական աշխատանքներով, մանաւանդ որ ներկայ Թուրքիան առօրեայ ձեւափոխութեան շրջան մը կը բոլորէ, որ թէեւ իր էութեամբ բոլշևիկեան է, բայց զերագանցապէս բոլշևիկեան յեղափոխութեան ազդեցութիւնը կը բաժնէ եւ գործելակերպով համամասն է բոլշևիկեան կիրարկած մեթոտներուն: Բոլշևիկեան Ռուսաստանը հրճուանքով կը դիտէ այդ բոլոր փոփոխութիւնները, որոնք կը պատրաստեն մտայնութիւն մը, աւելի շիտակ ինչպէս ցում մը այնպիսի փոփոխութիւններու հետ, որոնք կրնան խորունկնալ օր մը, այս անգամ բոլշևիկներու կողմէ, ու... հանդիպիլ Խաշտըւելու նոյն մտայնութեան:

Գործնական քաղաքական կեանքի մէջ, Թուրքիան բռնած է դիրք մը, որ ըստ ամենայնի կը գոհացնէ բոլշևիկեան ձգտումները: Իսկ քաղաքական հասունցած զէպքերը կը թելադրեն բոլշևիկեան Ռուսաստանին ըլլալ ըզդատու եւ իր կողքին պահել քեմալական Թուրքիան, որ մեծ պետութիւններու միջամտութեան վտանգին ենթակայ՝ աւելի ու աւելի կը մօտենայ Ռուսաստանին:

Ռուսաստանը կ'օգտուի ներկայ Թուրքիոյ կազմակերպուած ուժէն եւ կը սպասէ, որ ան հարկադրուած՝ ընդունի խորհրդային կարգը, եւ Ռուսաստանն առանց արիւնհեղութեան եւ մանաւանդ միջազգային բարդութեան՝ տէր դառնայ Ս. Ս. Հանրապետական Թուրքիոյ:

Իրօք, Թուրքիա երկու սուրի մէջ կը գըտնելի եւ կանգուն կը մնայ միայն միջազգային ներկայ հակամարտութիւններու շնորհիւ: